

Տարեկան գինը 10 բուրդ կէս տարվան 6 բուրդ:
Առանձին համարները 5 կոպէ կով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Խմբագրատանը) գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵԱԿ

Խմբագրատանը բաց է առաւօտան 10—2 ժամ
(հացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լիգուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաոն 2 կոպէ:

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մտաւոր կեանքը չը կայ:—Ներքին տեսութիւն: Նախակ Ախպարապետ: Ներքին տեսութիւն: Նախակ Ախպարապետ: Ներքին տեսութիւն: Նախակ Ախպարապետ:

ՄՏԱԽՈՐ ԿԵԱՆՔ ԶԸ ԿԱՅ

Եթէ համեմատենք Կ. Պոլսի հայերին կովկասեան հայերի հետ, կը համոզվենք, որ Կ. Պոլսի հայերը մի առաւելութիւն ունեն մեզ վրա, այն է որ նրանք վաղուց է արդէն սովոր են կենդանի խօսքին, իսկ մենք դեռ ևս այդպիսի պահանջ չենք զգում:

Նրանց մօտ կենդանի խօսքը լսելու պահանջը զարգացել է մասամբ իրանց հոգևորականների քարոզների միջոցով, մասամբ էլ լսարանների միջոցով, որոնք հիմնվել են և շարունակվում են աշխարհական երիտասարդների ջանքերով:

Մեզ մօտ այդ չը կայ: Մեզ մօտ, հազիւ զարգանալ է սկսում ընթերցանութեան պահանջը. արպարական խօսքը մեղանում աւելի ծաղկած դրութեան մէջ է, քան թէ կենդանի խօսքով դադարի աւանդելը:

Ի Ն Թ Ը

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍՓՈՐՏԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՍ

Սենեակի լուսամուտներից, ուր նստած էր վարդանը, չընդադաժած իր հիւրնկալի ուրախ ընտանիքով, երևում էր կանաչադաղ հովիտը, որ վերջանում էր գեղեցիկ լեռներով: Լեռները պատած էին խիտ անտառներով, և հսկայ ծառերի ծայրերը միմյանմէջ լուրջ կարգ կապուտակութեան հետ, ստեղծում էին մի քանակի պատկեր: Վաղորդեան արեգակը թափել էր այնտեղ իր ոսկեղէն ճառագայթները, և նրա լուսով, արծաթէ օձերի նման, պտուղով լի և շողողալով, վազում էին զանազան գետեր, և ճեղքելով անց էին կենում հովիտի հարթութեան միջից: Վարդանը չէր կարողանում աչքերը հեռացնել այդ հրաշալի տեսարանից: Վարդանը և անձակ բնութիւնը մարդու աշխատանքի ձեռքի տակ այնպիսի գեղեցիկ կերպարանք էր ստացել, որպէս կը տարի կտորը պատկերահանի հրաշակներ փոխի տակ:

—Երբ լսում էիք բողբոջի և թուրքերի արտաբանութիւնը, շարունակեց տանելը մի առանձին ուրախութեամբ,—բայց այն ժամանակ-

Մեր դպրոցներն անգամ չեն զարթեցնում այդ մտաւոր պահանջը մեր ամբողջ մէջ:

Նսեցաւ տարիներում, երբ սկսվեցան մեզ մօտ հայերէն լեզուով հրապարակական դասախոսութիւններ, բաղմամբիւ հասարակութիւն էր գալիս լսելու այդ դասախոսութիւնները: Հայր, մանաւանդ թիֆլիսցիներ, սիրում է միայն նորութիւններ, բայց հէնց որ մի բան հնանում է, հայի, մանաւանդ թիֆլիսցիներ ուղեղը յոգնում է, նա երկար ժամանակ չէ կարող կենտրոնացնել իր մտաւոր ոյժը մի բանի վրա....

Մտաւոր կեանքին, մտաւոր գործունէութեան անսովոր ուղեղը պէտք է վարժեցնել մտածելու, պէտք է սովորեցնել մտաւորապէս ապրելու:

Եթէ այդ անհնարին է անել բնական ճանապարհով, անհրաժեշտ է այդ գլուխ բերել արուեստական միջոցներով:

Դեռ երկու սերունդ սրանից առաջ ռուսաց կառավարութիւնը փող էր վճարում տեղացի ծնողներին, որպէս զի նրանք ուղարկեն զինանգիւ իրանց զաւակներին:

Ներքին յետոյ շատ բաներ փոխվեցան: Տեսնում էք այդ սրանցիւ լեռները, մի և կէս դար առաջ դրանք բոլորովին մերկ էին, մի փոքրիկ թուփ անգամ չը կար այդ սրբերի վրա: Այն ժամանակ բարբարոսի ձեռքը, որպէս անգլիացի կոտորում էր մարդերին, այնպէս էլ անխնայ կոտորում էր ծառերին: Բոլորը սպառված էր, ժողովուրդը վառելիքի համար գործ էր անում արքայ, իսկ շինվածքի համար փայտ չը կար, այդ պատճառով ստիպված էին բնակվել գետնափոր խորշերի մէջ: Բայց երբ արեւելից գիւղերը լցվեցան բնակիչների բազմութեամբ, իսկ մեր լեռները ծածկվեցան անտառներով: Այդ բոլորը անկվել է գիւղացիների աշխատանքի ձեռքով: Տեսնում էք այդ կանաչադաղ հովիտը, առաջ նա մի ցամաք և անյուր անապատ էր, մի փոքրիկ գետ միայն ուներ, որը բոլորովին ցամաքում էր ամառնային տոթերից: Իսկ այն օրից, երբ անտառները աճեցին, մեր հովիտը ստացաւ ջրի առատութիւն: Այժմ չմիայն մեր գաւառի պտղերը և ամենաարագանքը երկրներից մէկն է: Այժմ, շատ բաներ փոխվեցան.... Առաջ այստեղ ճանապարհներ անգամ չը կային, իսկ այժմ ամեն տեղ կը տեսնէք հայրենի նման հարթ ճանապարհներ, որ միացնում են մեր երկրի բոլոր քաղաքները, և այդ ճանապարհների վրա սլանում են կառքեր, որ տարի գործութեամբ: Մեր երկրի արդիւնաբերութիւնները մենք վաճառահանում ենք հազարաւոր մղոններ հեռու և փոխարէնը ստանում ենք ինչ որ մեզ պէտք է:

Վարդանը զարմացած լսում էր այդ բոլորը, բայց երբ նրա աչքը ընկաւ գեղեցիկ Լալայի ե-

լ, յիշում իրանք ծնողներն են վճարում իրանց մանուկների ուսման համար և ուսում առնելու ցանկացող երեխաները աւելի շատ են, քան կարող են իրանց մէջ աշակերտներ պարունակել մեր մի քանի պետական դպրոցները:

Այդպէս էլ պէտք է սկսել ըստարանների, հրապարակական դասախոսութիւնների, կիրականօրեայ դպրոցների վերաբերութեամբ: Մենք չենք ասում որ փող պէտք է վճարել լսողներին, բայց պէտք է ձրիապէս դասաւանդութիւն անել, կամ շատ էժան մուտք նշանակել: Այդպիսով միայն կարելի կը լինի յաղթել մեր հասարակութեան մէջ դէպի մտաւոր կեանքը տիրող անտարբերութիւնը:

Ի հարկէ, սկզբից լսողներ բիշ կը լինեն, բայց այնուամենայնիւ կը կազմվի լսողների մի հաստատութիւն, մի կ օր ի գ, որ հետզհետէ թւով կաճի:

Բայց բարեգործական նպատակով դասախոսութիւններ կարգաւորեց, երևում է, պէտք է ձեռք վերցնել, որովհետեւ ծիծաղելի է կարդալ դասախոսութիւն մի վաթսուն մարդու առջև և վերջը հա-

շիւ տալել, թէ այս ինչ դասախոսութիւնից դոյացաւ յօգուտ սովորանջների եօթանասուն բուրլ զուտ արդիւնք, այն էլ մի քաղաքի մէջ, որ պարունակում է իր մէջ բառասուն հազար հայ բնակիչ: Ուրեմն բառասուն հազար հայերից միայն յիսուն, վաթսուն մարդ է դոնվում, որոնք պատրաստ են լսել մի հրապարակախօսութիւն, իսկ մնացածներին պէտք է հրաւիրել ձրիապէս, կամ ինդրել, աղաչել, որ բարեհաճեն տոմսակ վեր առնել, սաղացնել տոմսակներ և այլն....

Երբ հայը լսում է թէ դասախոսութիւն է լինում յօգուտ սովորանջների, նա նոյն ինքն դասախոսութիւնը երկրորդական բան է համարում և ասում է. «արդէն բաւական տուել եմ յօգուտ սովորանջների»: Բայց նա չէ գնում դասախոսութիւն, նոյն իսկ դասախոսութիւնը լսելու համար:

Պէտք է փոքր առ փոքր սովորեցնել մեր ժողովուրդը գնալ դասախոսութիւնը լսելու նոյն իսկ դասախոսութեան համար:

Գ. Ո.

Բնակ, յայտնի չէ թէ ինչու նրա խելքին եկաւ հարցնել, թէ որտեղ է սովորել օրիորդը: —Մի շաբաթ հաջիւ կը լինի, որ աւարտեց Նոր-Վաղարշապետի ձեռնարանում, իսկ այժմ պատրաստվում է համալսարան մտնել բժշկութիւն սովորելու: Առողջութիւնը թոյլ է, ես կը ցանկանայի, որ մի քանի ամիս անցկացնէր գիւղում, բայց նրան ոչինչով չեն կարող համոզել:

—Իսկ քանի որդիք ունիք դուք: —Մեր տոհմը միշտ բազմածին է եղել, մեր նախնայայտ տանուտէր խաչօր ընտանիքը բաղկանում էր աւելի քան յիսուն հոգուց, իսկ ես միայն հինգ դաւակներ ունեմ: Լալան միակ աղջիկ դաւակ է, մնացած չորսը տղամարդիկ են: —Երբեք ես պարտավորում: —Մէկը անտառապահ է մի և նոյն անտառների, որ տեսնում էք, մէկը պրոֆեսոր է Կարինի համալսարանում, երրորդը գնդապետ է Վանի զորաբանին մէջ, իսկ չորրորդը դեռ սովորում է Նոր-Վաղարշապետի գիւղատնտեսական ուսումնարանում:

Վարդանին անմանօթ երեքսալ քաղաքի անունը և հարցրից:

—Այս կողմերում ես չեմ յիշում մի այս անունով քաղաք:

—Երբ հին Բայազէտն է, այժմ այս անունն է կրում: Մեր քաղաքներից, գիւղերից և գաւառներից շատերը փոխել են իրանց անունները, մի քանիսը իրանց վաղեմի պատմական անուններն են կրում, իսկ մի քանիսը նոր անուններ են ըստացել:

Տանտէրը կրկին ձեռքն առեց լրագրի թերթը և կարդում էր մի յօդուած, որը, որպէս երևում

էր, սաստիկ անհանգստացնում էր նրան: Վարդանը հետաքրքրութիւնից չարժան հարցրից.

—Երբ նորութիւն կայ: —Առանձին ոչինչ.... էգուց քաղաքում պիտի գումարվի երեսփոխանական ընդհանուր ժողով... մի քանի վիճելի հարցեր պէտք է քննութեան ենթարկվեն... չը գիտեմ ինչով կը վերջանայ... կուսակցութիւնները սաստիկ յուզված են երևում... —Երբ ես կը լինեմ քաղաքում: —Գնեմ կարող չը լինել:

Խօսակցութիւնից երևաց, որ Վարդանի հիւրընկալը, այդ հովիտի գիւղացիներից ընտրված, երեսփոխան էր:

Նախաձայնից արդէն վերջացել էր Վարդանը վերկացաւ, և հիւրնակալութիւն յայտնելով, կամենում էր հեռանալ:

—Եթէ դուք կը ցանկանայիք տեսնել մեր գիւղում մի քանի հիմնարկութիւններ, ասաց նրան տանելը,—ես սիրով յանձն կառնէի առաջնորդել ձեզ:

—Շնորհակալ եմ, պարոն, պատասխանեց Վարդանը:

—Եթէ միւս անգամ կը պատահի ձեզ անցնել մեր գիւղից, խօսեց տանիկինը,—մեր դռները միշտ բաց կը լինեն ձեր առջև:

—Շնորհակալ եմ, օրիորդ, ասաց Վարդանը, աւելի խոնարհ կերպով գլուխ տալով:

Վարդանը դուրս գալուց յետոյ, այժմ նոր սկսեց զգալ իր նեղված դրութիւնը գիւղական ընտանիքի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿԱ ԱՌԱՋԻՆՈՒՅԻՑ

Մայիսի 26-ին

Ներկայ տարվայ «Մշակ» № 71 «Թանգութիւնը թիֆլիսում» և № 78 «Բարձրագոյն ինքնավարութիւն» պատուական և հասարակութեան բարոյութեան համար մտածած և գրած առաջնորդող յօդուածները շատ յարմար ժամանակին լայն տեսանքով համար, և մենք խորհուրդ ենք տալիս մեր համաքաղաքացիներին ծանր և լուրջ ուշադրութիւն դարձնել այդ առողջամիտ յօդուածներին վրա, որոնք միայն ցանցաւ և խնթ մարդիկներին և նրանց նմանների համար անմիտ են և անխելք. այս, թո՛ղ ախարհացիք լաւ կարգան այդ յօդուածները և զգուշանան, եթէ ոչ վերջը չարաչար կը պատժվեն և կը զղան—բայց այն ժամանակ արդէն ուշ կը լինի: Պարզեք մեր միտքը: Այս տարվայ յօդուածի ամբողջութիւնը Ստեփանյան լուսնային է նոր ընտրութիւն ձայնաւորների, քաղաքային վարչութեան անդամների և քաղաքագլխին, ընդհանրապէս յայտնի է, որ մեզանում ամբողջ իր ընտրութեան քուէն տալիս է ոչ թէ նորան, որ արժանի և ընդունակ է քաղաքային վարչութեան մէջ գործող լինելու, այլ նորան ով հարուստ է և աղա, և մի և նոյն ժամանակ ժողովրդին հարստահարող չարիչ, անամօթ, խարդախ, անողորմի նման ժողովրդի արհաւիր ծծող և աղայական բարձրութիւնից արհամարական հայեացք ձգող ուսմիկ վրա: Այդպիսի աղաներից և իրանց արիստոկրատներ կարծողներէր մեր քաղաքը բացի մեծամեծ վնասներից և ամենաշինքն օգուտ չէ կարող սպասել, որովհետեւ, կրկնում ենք «Մշակ» հետ. «քաղաքային վարչութեան գործողները պէտք է իսկապէս բոլորովին անկախ մարդիկ լինեն և իրաւապէս չը պէտք է ունենան միջապէս թէ անմիջապէս ուրիշ գործերով զբաղվելու: Եթէ ոչ զանազան ափէքներով և չհասկէտ արդիւնազոր-ծուծեամբ զբաղվելով, նրանք կորցնում են իրանց հեղինակութիւնը զանազան ափերիստների, չարիչների, մանր հարստահարողների, կաշառք տուողների աչքում:»

Մաքուր ճշմարտութիւն չէ այդ միտքը, սիրելի քաղաքացիք. ասացէ՛ք խնդրեմ, ինչ կը լինէր ձեր վիճակը, եթէ մեր այժմեան քաղաքագլուխը չէր լինի պ. Գեղամեանցը և կը լինէր մի հարուստ կալուածատէր, որ ունենար մեծ քանակութեամբ ցորեն, ինչ, դուք կարծում էք թէ այն ժամանակն էլ պուրը 2 ր. 40 Կ., ախր կարճ էր ձեռք բերել, ինչպէս այժմ, թէ աղա և ցորենատէր ինքնավարութեան ղեկավարների շնորհիւ ախրի պուրը բարձրացած կը լինէր 5—6 րուր: Լաւ մտածեցէ՛ք, թէ այս թանգութեան ժամանակ մեր անգութ աղաները ինչ կեղտոտ և ցած միջոցներով ուղղում էին խեղճ ժողովրդի վերջի կուպէկն:

մէջ, Նա գտնում էր իրան որպէս մի բոլորովին վայրենի, որը աւելի քաղաքակրթված հասարակութեան մէջ տանջվում է, թէ ինչու ինքը անտաշ և անկիրթ մնաց, թէ ինչու ինքը չէր կարող այնպէս խօսել, այնպէս դատել և այնպէս պահել իրան, որպէս միւսները: Այդ ինչ հրաշք էր: Տա՛նուտէր իսպիտ տոհմը, անցնելով դարերի բոլոր միջից, դուրս, մաքրվել և կերպարանափոխվել էր, ստեղծելով մի նոր և ազնիւ սերունդ:

Վարդանը և իր հիւրերը միասին գտնում էին գիւղի փողոցով: Նրանց մօտից անցնում էին մա՛քուր և պարզ կերպով հաղնված շինական կնիկները, իւրաքանչիւրը ձեռքին հիւսելով մի բան, և նրանց տղամարդիկը գործաւորի հագուստով: Ոչ մէկը անգործ չէր, ամեն մարդ իր զբաղմունքն ունէր: Չարմանում էր Վարդանը տեսնելով, թէ հրա՛նք փոխվել էր կնիքը, թէ հրա՛նք վայելուչ կերպարանք էր ստացել նա: Առաջվայ դեռ հիւսական կոշտութիւնները այլ ևս չէին երևում. ամեն տեղ շնչում էր կրթութեան ոգին իր ջերմ, կենսա-գործող զօրութեամբ: Մի բան որ մնացել էր անփոփոխ, դա էր հայկական խօսքը—լիզուհ: Բայց հրա՛նք մշակվել, հրա՛նք կոխվել էր այդ լիզուհ, և հրա՛նք զեղեցիկ դարձուածներով այժմ հնչում էր նա հայ մարդու բերանում:

Վարդանը իր հիւրերից հետ այժմ գտնվում էին գիւղից դուրս: Գէպի ամեն կողմ, ուր և նայում էր Վարդանը, երևում էին հարուստ ազա-րակներ, գեղեցիկ այգիներ, լաւ մշակված դաշտեր և ճոխ արօտամարգեր:

Նրանք անցան մի գործարանի մօտից, որտեղ տախտակներ էին սղոցում: Այստեղ գործում էին զինուորային մեքենաներ և չոգին: Արդարանը մատակարարում էր բոլոր գիւղերի և մերձակայ-

նէ խել և իրանց որդիներն աղանապատիկ գնով սաղաքներ հասարակութեան վրա:

Մի ուրիշ կէտ ևս, որ չէ կարելի առանց ուշադրութեան թողնել. տգէտ ժողովուրդը, որ օ-րէնքից ոչինչ տեղեկութիւն չունի, յաճախ ամեն մէկ գործի համար դիմում է ուղարկւելին կամ քաղաքագլխին բերանացի խորհուրդներ հարցնելու և կարծիք իմանալու համար. ի մեծ պատիւ մեր այժմեան քաղաքագլուխ պ. Գեղամեանցին, պէտք է ասենք որ պարտք ոչ թէ ամեն սիրով և յօժարութեամբ լուսն է իրան բազմաթիւ դիմող-ներին թէ ուղարկւելու և թէ իր անփական տա-նը, այլ մինչև անգամ աղքատների համար խնդիր-ներն ինքն է գրում, ոտքով նրանց հետ միասին գնում է նրանց հողերը տեսնելու, չափելու, որ-պէս զի ստուգէ թէ իրաւի այդքան է նրանց հո-գը, թէ դրացի հարուստ աղան այդ խեղճերի հո-գերից յափշտակել է, և այլ այսպիսի հարկաւոր-ւոր դէպքեր. բայց եթէ ժողովրդական պ. Գեղա-մեանցի տեղը կը լինէր ամբարտաւան արիստո-կրատ աղա, այսինքն է որ այդպիսի դէպքերում ժամերով սպասեցնել կը տար իր խորհուրդին դիմող խեղճներին կամ խնդրատուներին և շատ անգամ էլ չընդունելով նրանց կանապատէր և կը վռնէր: Այդպիսի կոպիտ վարմունքներ մեր աղա-ների կողմից անպայման, փառք Աստուծոյ, շատ են տեսել. ուրեմն թող այդ օրինակներից լաւ խրատվեն և ընտրեն քաղաքային վարչու-թեան այնպիսի անդամներ, որոնց արտերկր ասելի մօտ են հասարակութեան շահերը և որոնք բոլոր-ովին անկախ մարդիկ են, և ոչ թէ կապաւառու-ներ և չարիչ աղաներ:

Ինչ վերաբերում է նոր քաղաքագլխի ընտրու-թեան, մեր համեստ խորհուրդն էր, խնդրել և հա-մողել պ. Գեղամեանցին դարձեալ մնալու իր պաշ-տօնի մէջ, քանի որ նորան արժանի յաջորդ ոչ մէկին չունենք. և թէ ևս պարտք վարչաց ներկա-յացքից է իր հրաժարականի խնդիրը այնտեղ, ուր հարկն է, բայց յոյս ունենք, որ կը զիջանի ժո-ղովրդի խնդիրներին, և տեսնելով հասարակութեան ջերմ համակրութիւնը դէպի ինքը, խրախուսված, դարձեալ իր վրա կառնէ քաղաքագլխի ծանր պաշտօնը, որ անքան վայել է իրան:

Գ.

ՆԵՐՔԻՆ ԱՌԻՐԵՐ

Մի երիտասարդ, որ ուսում է աւել Կ. Պոլսի ամենաաւելի դպրոցներում, խնդրում է մեզ յայ-տնել, որ կը կամենար մասնաւոր տներում դա-սեր տալ հայերէն, ֆրանսերէն, իտալերէն և թիւր-քերէն լեզուներից և նոյնպէս մասնաւոր կայքի: Զանկացողները կարող են դիմել Կրկնի (Կլի-բի դիմակ) № 2 տան մէջ:

Շնորհակալութեամբ ստացանք Հիմնական դի-դակտիկական կանոնները վերնագրով Ա. Կրտսէր-

քաղաքի համար տախտակներ զանազան ձևերով և զանազան մեծութեամբ:

—«Այդ ունի է պատկանում, հարցրեց Վար-դանը:

—«Մեր գիւղում, ինչ գործարան որ տեսնելու լինէք, առանձին մարդու սեփականութիւնն չէ, պատասխանեց նրա հիւրերը—գործարանները այստեղ պատկանում են գիւղական համայնքին, ամեն մի գիւղացի մասն ունի նրանց մէջ: Գերան-ները ստացվում են մերձակայ անտառներից, որոնք նոյնպէս գիւղացիների սեփականութիւնն են:

Նրանք անցան սղոցարանից:

—«Այս այդ անգլին շինուածքը, ցոյց տուեց Վարդանի հիւրերը—դա պանրագործութեան գործարան է. այստեղ պատրաստվում է մեր գաւառի ամենաաւելի պանիրը. դա նոյնպէս պատ-կանում է գիւղական համայնքին: Իւրաքանչիւր գիւղացի ներկայացնում է այստեղ իր անասուն-ներից ստացած կաթը, և ընդհանուր արդիւնքի բաժանման ժամանակ, նրա համեմատ ստանում է կամ պանիր կամ արծաթ:

Նրանք գտնվում էին այժմ դաշտում: Հասունա-ցած հունձքը արտերից քաղվում էր, բայց քաղ-վում էր ոչ թէ գիւղացու մանդաղով կամ գերան-դիով—այստեղ նոյնպէս գործում էր մեքենան, որ մեծակ հարկաւորում մշակների գործ էր կատա-րում: Այս ինչ էր նշանակում հնչուածն աղա-տութիւնը.—այժմ հասկանում էր Վարդանը:

Նրանք անցան մի անգլին շինութեան մօտից, դա աղօթք էր: Այստեղ նոյնպէս հեղացած էր աղանաւանքը և ջրի փոխարին գործում էր չոգին: Բազմաթիւ գիւղերի ցորենը այս հիմնականութեան մէջ աղացվում էր, և մաքուր, ձանր պէս սպի-տակ աղիւրը վաճառահանվում էր դէպի օտար եր-

կէջի գործի հայերէն թարգմանութիւնը: Թարգմա-նիչը Հ. Ղուկասեանցն է: Գիւղը տպված է Ալեքսանդրապոլում, Գ. Ստանյանցի տպարանում: Ներկայ 1880 թւին և արժէ 40 կոպէկ: Գրքի մա-սին կը խօսենք: Շնորհաւորում ենք Ալեքսանդր-ապոլը, որ ունի այսպիսի գեղեցիկ տպարան:

«Մշակին» կէս տարով գրվել ցանկացողները, կարող են գրվել ներկայ ամսից: Կէս տարվայ բաժանորդարինը 6 րուր է:

Ֆրանսիական «Temps» լրագիրը հաստատում է այն լուրը, որ մեր ծանօթ Շարլ դը-Կուտուշի նը-շանակվել է Ֆրանսիական հիւպատոս թիֆլիսում:

Նիժնիս ստացանք 15 րուր յօդուած վաճի սո-վեաւների հետեւալ անձինքներից: Ուտին Բէյնիշ 1 ր., Մարտիրոս Հայրապետեան 1 ր., Մնացա-կան Յովսէփեան 1 ր., Գաւիթ Գամիւրեանց 1 ր., Գարբէլ Կրկնիսեանց 50 Կ., Խաչի Պետրո-սեան 50 Կ., Սարգիս Յարութիւնեան 50 Կ., Գա-լուստ Մեղայեանց 50 Կ., Օհանեան 50 Կ., Աւե-րիսեան 50 Կ., Բարսեղեան 50 Կ., Մալիկեան 50 Կ., Գաթիկեան 50 Կ., Մաքսեան 50 Կ., Յով-սէփեան 50 Կ., Կարապետեան 50 Կ., Ջէյրա-նեան 50 Կ., Վարդանեան 50 Կ., Փանիկեան 50 Կ., Վաղերեան 50 Կ., Երեմեան 50 Կ., Խաչա-փեան 50 Կ., Վլասեան 25 Կ., Թարխանեան 25 Կ., Փիրաւեան 25 Կ., Մալիկեան 25 Կ., Փանեան 25 Կ., Փանեան 25 Կ., Խաչիկեան 25 Կ., Մար-կոսեան 25 Կ.: Ընդամենը 15 ր.:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Չուղուրէթ թաղում Տէր-Մկրտչեանցի և Վարձուրի տների առջև անձրևների հեղեղից պատճառվել է մի անա-գին պատառուածք, որ տանում է դէպի նոյն փո-ղոցի տակ անմաքուրեան խողովակը: Չը նայե-լով, որ հա՛մ մի քանի շաբաթ է, որ այդ պատա-ռուածքը յայտնվել է, բայց ոտիկանութիւնը նրա վրա ուշադրութիւն չէ դարձնում. վերջին անձ-րի ժամանակ այնտեղից վազող հեղեղը տա-րաւ իր հետ մի օտաւ արհեստաւորի և գցելով նոյն պատառուածքի մէջ՝ խեղդեց:

ՄԵՇՂԱՐԱՔԻՍԻՍԻՑ մեզ հաղորդում են, որ տեղային միակ արժանաւոր քահանայ վախճան-ված լինելով, այժմ հանգուցեալի փոխարէն մի ուրիշը ձեռնադրել տալու համար հասարակութիւ-նը երկու կուսակցութեան է բաժանվել, որոնց մէջ մեծ երկպառակութիւն է ծագել: Կուսակ-ցութիւններից մէկը ցանկանում է ձեռնադրել տալ տեղային դպրոցի վարժապետներից մէկին, որ աւարտել է Նիսիսիսեան դպրոցում և աւելի յարմարութիւն ունի կոչված պաշտօնին, իսկ միւս կուսակցութիւնը կամենում է ձեռնադրել տալ մի գինեւաճառի, որ հազիւ իր անունը գրել գիտէ և կրնի: Դա նոյնպէս պատկանում էր գիւղական համայնքին:

Բայց մի բան, որ աւելի զարմացնում էր Վար-դանին, այդ այն էր, որ բոլոր գիւղացի բանուոր-ները, որտեղ և հանդիպում էին նրան, աչքի էին ընկնում իրանց համարձակութեամբ, անձնաւորա-հոլիւստ և այրական անվերահսկելի կարծես, դրանք մնվել և մեծացել էին կատարելալ աղա-տութեան մէջ, կարծես, դրանք երբեք թուրքի ապտակը չէին կրել, կամ քրդի նիզակը միան-գամ գոնէ չէր վախեցնել նրանց: Նա տեսնում էր, որ այդ աշխատող բազմութիւնը ընդունակ էր հարկը պահանջած ժամանակ, թողնել բաճը և արօք, և նրանց փոխարէն զէնք կրել, և նոյնպէս հմուտ, և նոյնպէս յաջող կերպով գործ անել:

—«Պատերազմի ժամանակ այդ մարդիկը զի-նուր են դառնում, ասաց Վարդանի հիւրերը—այնպատեղը մեծ մասամբ դադարում է, և այս պատճառով պատերազմը միշտ կորստաբեր հե-տեանքներ է ունենում մեր երկրի համար, թէ և նա ունենում է և իր առանձին օգուտները...»

Անցնելով դաշտերից, նրանք դարձեալ մօտեցան գիւղին: Նրանք առջև դրած էր մի նոր հիմնաւոր-ութիւն: Դա աւելի նրան էր այն չէնքերը, որ կա-ռուցված են լինում օրինակելի ազգաբանիկի մէջ:

—«Այդ մեր գիւղատնտեսական դպրոցն է, աս-աց Վարդանի հիւրերը—Այն, որ տեսաք առաւօտեան, տարրական ուսումնարան էր:

Այս ինչ դպրոց էր, այսպիսի դպրոց Վարդանը երբեք չէր տեսել, թէ և ինքն էլ մի ժամանակ վարժապետ էր եղել: Նա բովանդակում էր իր մէջ գիւղային տնտեսութեան վերաբերեալ բոլոր պարագայքը: Նրա անգլին շինութեան առջև տա-րածված էր ընդարձակ աղբարկ զանազան բա-

բոլորովին անարժան է յիշեալ պաշտօնին.—Մեզ խնդրում են հոգեւոր իշխանութեան ուշադրութիւ-նը հրաւիրել այս պարագաների վրա, որ նա օրի-նաւոր ընտրութիւն անէ և թող չը տայ որ անկիրթ և անբարոյական մարդիկ Աստուծոյ տան սպասա-ւորութեան պաշտօնին հրաւիրված լինեն:

Մեզ գրում են Ա.Լ.ՔԱՍԻՆՆԱՐԱՊՈՒԹ, թէ վեց ամիս առաջ պ. Տարոյեանցի արձանացի մէջ հաւաքվել է 40 րուր յօդուած «Կարոցաբար» Արեւելեան ընկերութեան և յիշեալ գումարը յան-ձնվել է մի երիտասարդի, որ հասցնէ նոյն ընկե-րութեան Ալեքսանդրապոլում գտնված ներկայա-ցուցիչներին: Բայց որպէս յայտնվում է, ընկերու-թեան ներկայացուցիչները տակաւին այս գումարը չեն ստացել, և նուիրատուները ցանկանում են, որ 40 ր. ստացող երիտասարդը բացատրութիւն տայ թէ ինչ է արել փողերը.—Նոյն տեղից գը-րում են, որ 50 րուր ևս հաւաքված է եղել յօ-դուած «Արարատեան» ընկերութեան և յանձնվել է պ. Յ. Բ.-ին, և այդ գումարը նոյնպէս իր նպա-տակին չէ հասել:

ՆՈՒԽՈՒՅ քողոցներ են յայտնում տեղային յա-ջորդ Գրիգորի վարդապետի մասին, իբր թէ նա վիճակապատկան արդիւնքների մէջ անձնութիւն-ներ է գործում. բայց գործնից տեղային դպրոցի անունով օտար քաղաքներից զանազան գումարներ է ստացել, որոնց տակաւին պատկանած տեղը չէ հասցրել: Կարողի հոգաբարձութիւնը այդ մասին բողոքել է Վարդապետի կոնսիստորիային, և հետեւեալը դեռ յայտնի է:

Մեզ հաղորդում են ՋԱՔԱԹԱՒԱԻՑ, թէ սխալ է «Кавказ» լրագրի 120 համարի այն տեղեկու-թիւնը, իբր թէ տեղային վարչութեան գործ դը-րած միջոցների շնորհիւ քաղաքի ժողովուրդը ստացաւ լաւ ապիտակ հաց իրիստ էժան գնով և այլն:—Եթէ քաղաքի ժողովուրդը հաց ստացաւ և թանգութիւնը մեղմացաւ, ախրի պուրը 7 1/2 րուր 40 կոպէկից կէսի ինչելով, դրանով ժողո-վուրդը պարտական է ոչ թէ վարչութեանը, որը բոլորովին անուշադիր մնաց, այլ մի քանի հայ պարսնիկներ, որոնք լցրին քաղաքը հացի անաղին քանակութեամբ:

Մեզ յայտնում են, որ Ալաբայի, Գլխաւորա-պէս Փոքրիսի նահանգի տաճիկ բնակիչները մեծ եռանդով աշխատում են գաղթել դէպի Տաճիկա-տան: Նրանք իրանց կաթերը և կալուածները վաճառում են կամ ամենաշինքն գներով, և կամ բոլորովին թողնում են: Օրինակ, մի մասնատական մօլա Գիսալի անունով առաջարկում էր գնել 9 սերմանած արտ, իւր տունը, մարազը, ախուրը, դուրը, մի մարգագետին, մի բանջարանոց, մի գոյգ եղ, մի գոյգ մատակ ձի իրանց ձագերով, մի գո-

թանմունքներով, որ մշակվում էին աշակերտների և աշակերտուհիների ձեռքով: Աշխարհի համարեա բոլոր բոյսերի, տունիկերի և ծաղիկների տեսակից կային այնտեղ զանազան օրինակներ: Այստեղ գիւղը և մեռած տառը աւելի չէին զբաղեցնում ուսանողներին: Ամեն ինչ սովորում էին նրանք բը-նութեան հրաշալի գրքի մէջ. Այստեղ որոշեալ ժամերում ուսանողները պարագլուխ էին մարմնա-մարդութեամբ և զէնք գործ անելու վարժութիւն-ներով: «Այս այսպիսի դպրոցը կը պատրաստէ լաւ երկրագործ և լաւ զինուոր, մտածում էր Վարդանը:

Վարդանը շնորհակալութիւն յայտնելով իր հիւ-րերին, բաժանվեցաւ նրանից: Այժմ ուր պէտք էր գնալ, ինքն էլ չը գիտէր: Նա տեսաւ հանրա-կառքի նման մի բան, որի երկու կողմերի վրա չարված էին մարդիկ: Ինքն էլ նստեց, երբ իմա-ցաւ, որ տանում է դէպի երկաթուղու կայարանը:

Նրկաթուղու կայարանում նա գտաւ մեծ բազ-մութիւն, որ սպասում էին գնացքին: Զանկարծ նրա ականջին դիպաւ մի ծանօթ ձայն:

—«Վարդան...»

Վարդանը յետ նայեց, նրա առջև կանգնած էր պ. Սարգսյան: Երկու վաղեմի բարեկամները գրկա-խառնվեցան:

—«Այս այդպէս, բարեկամ, խօսեց պ. Սարգսյան չը թողնելով Վարդանի աջը իր ձեռքից,—մենք դարձեալ տեսնվում ենք միմեանց հետ ուղիղ եր-կու հարկու տարուց յետոյ...բաւական երկար ժամանակ է...Գու զեռ նոյնն են մնացել, Վար-դան, դու ամենին չես փոխվել...Բայց այս եր-կու դարերի ընկալեցում մեծ փոփոխութիւններ են երկրում...Յիշում ես, Վարդան, մի անգամ քեզ ասում էի, թէ Հայաստանը մարդ-

